

Միջին Արեւելքի հարցերու Ռուսիոյ նախագահի յատուկ պատուիրակ Անտոնի Վետովին Կիրակի օր պիտի այցելէ Պեյրութ, լիբանանցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ քննարկելու համար շրջանային իրավիճակն ու խաղաղութեան գործընթացը վերականգնելու միջոցները, յայտարարեց Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոբին:

ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Պէյրութի մէջ 27-28 Մարտին կայանալիք արաքական վեհաժողովի միջպետական նախապատրաստութիւններու վերջնական փուլը կը սկսի վաղը, Շաբաթ օր, երբ կը գումարուի Արաքական Լիկայի եւ անոր անդամ երկիրներու բարձրաստիճան պատասխանատուներու ժողովը, ճշդելու համար ժողովին վերաբերեալ մասնաճամբները:

Խաղաղաստուութիւններու ընթացքը ու ժողովին արձարձուելիք հարցերը քննարկելու համար Պէյրութի պիտի ժամանէ այսօր Ուրբաթ:

Մուսա երէկ հեռաձայնեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի:

Երէկ նախարար Համմուտի հեռաձայնեց նաեւ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ:

Պատուիրակութիւնը ժողովներ գումարեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի, նախարարութեան ընդհանուր քարտուղար Մահմուտ Իսայի եւ նախարարութեան քաղաքական հարցերու բաժնի վարիչ Նաժի Ապի Ասիի հետ:

ՆԱՄԱԿ ՎԵՏՐԻՆԻ

Նախարար Համմուտ երէկ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Իւպրիէն Վէտրինի յղեց նամակ մը ի պատասխան անկէ Շաբաթ օր ստացած նամակին, որուն մէջ կ'արձարձէր շրջանային շարժումները:

Շար.ը՝ էջ 2

Շաբաթ օր պիտի գումարուի նաեւ Լիկայի տնտեսական եւ ընկերային հարցերու նախարարական ժողովը, որ պիտի բանաձեւէ վեհաժողովին ներկայացուելիք տնտեսական բնոյթի հարցերն ու առաջարկները:

Յառաջիկայ շաբաթակիցին Պէյրութի մէջ ժողով պիտի գումարեն արաքարտաքին գործոց նախարարները, որոնք վերջնական ձեւի մէջ պիտի դնեն վեհաժողովին օրակարգը:

Արաքական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա յիշեալ ժողովներուն մասնակցելու եւ լիբանանցի պաշտօնատարներու հետ նախապատրաստութիւնները:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱՊՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Սուրիոյ արտաքին գործոց նախարարի օգնական Ուալիտ Մուալլէ-մի գլխաւորութեամբ սուրիական դիւանագիտութեան բարձրաստիճան պատուիրակութիւն մը երէկ այցելեց Պէյրութ:

ԴԱՄԱՍԿՈՍ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ

Պէյրութի 21 (ՌՈՑԹԸԸԸԸ)՝ Սուրիա քննադատեց Իսրայէլի հետ կապերը «բնականոնացնելու» գիտարար, որ առանցքը կը կազմէ Ալեքսանդրիայի Արաքիոյ առաջարկած խաղաղութեան նախաձեռնութեան: Տեղեկատուութեան նախարար Ատնան Օմրան ըսաւ, որ սեղանակալ ծրագիրը, որ կ'առաջարկէ կապեր հաստատել Իսրայէլի հետ, եթէ անիկա վերադառնայ 1967ի նախապատերազմեան սահմաններուն, չի տարբերի Սուրիոյ պատկերացումէն: Սակայն Սուրիա կը մերժէ «բնականոնացման» ծրագիրը, զայն անիմաստ որակելով, հակառակ անոր, որ Իսրայէլացիք խանդավառութեամբ ողջունած էին զայն: Օմրան աւելցուց, որ յիշեալ զարժուածքը գոյութիւն չունի դիւանագիտական բառամթերքին կամ միջազգային օրէնքին մէջ: Օմրան ըսաւ նաեւ, որ Սուրիա կը նախընտրէ «բնական խաղաղ կապերու» պատկերացումը, որ պիտի իրականանայ, երբ համաձայնութիւն գոյանայ Իսրայէլի հետ:

ՄՈՍԿՈՒԱ ԹԻՖԼԻՍԸ Կ'ԱՄՔԱՍՏԱՆԷ ՉԵՉԷՆ ԸՄՔՈՍՏՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՅԱՆՅԱՆՔՈՎ

Հաղորդագրութեան գրողապատճառը ռուս խաղաղարար 4 զինուորներու Երեքշաբթի օրու առեւտնաբերումն ու աւելի ուշ ազատ արձակումը եղած է Աբխազիան վրաստանի մնացեալ բաժինէն բաժնող սահմանային շրջանին մէջ:

Ռուս զինուորները փոխանակուած են անվատողականներու կողմէ մը դաւելու պատերազմներով:

Մոսկուա Ուաշինկթընը չէ նշած իր յարձակողականին մէջ, սակայն արտաքին գործոց նախարարութեան ամբաստանութիւնները նաեւ համազօր էին զգուշացուած մը Մ. Նահանգներու, որոնք զինուորական մարզիչներ պիտի զրկեն վրացական բանակին մարզումին եւ զինուորին օժանդակելու համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿՐԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԱԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան չորրորդ պատգամաւորական ժողովին բացումը տեղի ունեցաւ երէկ երեկոյեան ժամը 7:45ին, Այն Սաատիի «Ռոյլ Փարք» պանդոկին մէջ:

Բացումին ներկայ էին Հ. Յ. Գ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան եւ անդամ Երուանդ Փամպուքեան, Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միխիթարեան, Հ. Մ. Ը. Մ. Կեդրոնական Կարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեան, Համազգայինի Կեդրոնական Կարչութեան անդամները եւ տարբեր շրջաններու Համազգայինի շրջանային վարչութիւններու եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներ:

Ժողովին բացումը կատարեց Համազգայինի Կեդրոնական Կարչութեան ատենապետ Յակոբ Եսփուճեան, որ առաջին հերթին ներկայութեան խնդրեց մէկ վայրկեան յիշատակել յիշատակելու արժանիքները Համազգայինի ունեցած կորուստներուն:

Ապա Յ. Եսփուճեան շեշտեց, թէ Համազգայինը կարելի դեր ունի արեւելքի հարցի լուծման մէջ եւ նշեց, որ այս պատգամաւորական ժողովը պիտի մտնէ ծանօթանայ Հայաստանի պետութեան կրթական ու մշակութային քաղաքականութեան եւ ծրագիրներուն, արժեքներուն:

Լեռնային Ղարաբաղի ՏՄԿԱՆԵԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱՄ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ խօսք առաւ ԵԱՀԿի մշտական խորհուրդին մէջ: Նախարարը Վիեննա ժամանած էր Մարտ 20ին, մասնակցելու համար նշեալ նիստին:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով ԵԱՀԿի Մինսքի խմբակի գործունէութեան, նախարար Օսկանեան անորդարութիւնը համարեց Մինսքի խմբակին ուղղուող մեղադրանքները: Օսկանեան յայտարարեց, որ Հայաստան զրահան կը գնահատէ ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներու գործունէութիւնը: Ան յիշեցուց, որ 2001ին, Շար.ը՝ էջ 10

ՉԻՆԱԴՈՒԼԻ ՄԸ ՇՈՒՐՁ ԶԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՆ ԳՈՅԱՅՆԵԼՈՒ ԶԱՄԱՐ

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՆ ՈՒ ԻՍՐԱՅԷԼ ՃԻԳԵՐԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ

Իսրայէլ եւ պաղեստինցիները խոստացան շարունակել ճիգերը համաձայնութիւն մը գտնելու համար պիսալի մը շուրջ, հակառակ անոր որ ամերիկեան միջնորդութեամբ տեղի ունեցած բանակցութիւնները ձախողեցան Չորեքշաբթի գիշեր:

Բանակցութիւնները շարունակելու ճիգերուն կուգահեռ շարունակուեցան նաեւ իսրայէլեան յարձակումները պաղեստինեան քաղաքներու ու գիւղերու վրայ, ինչպէս նաեւ պաղեստինեան անձնասպանական գործողութիւնները: Իսրայէլեան ուժերը 21 հոգի ձերբակալեցին Այրալորդանայի ժեհին քաղաքին շրջակայքին, ուրկէ եկած էր Չորեքշաբթի օրու անձնասպանական գործողութիւնը կատարած պաղեստինցի, յայտնեցին պաղեստինեան ապահովութեան աղբիւրները: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ տասնեակ մը պաղեստինցիներ ձերբակալուած է:

Ամերիկացի պատուիրակ Անթոնի Չիսիի հովանաւորած եռակողմանի բանակցութիւնները անարտեցան կէս գիշերէն ետք, առանց համաձայնութեան մը յանգելու: Երկու պատուիրակները:

Իսրայէլացի զինուորներ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը:

Կուրսիները համաձայնեցան շարունակել հանդիպումները: Իսրայէլի պաշտպանութեան Շար.ը՝ էջ 10



Իսրայէլացի զինուորներ կը ձերբակալեն պաղեստինցի երիտասարդ մը:

Կուրսիները համաձայնեցան շարունակել հանդիպումները: Իսրայէլի պաշտպանութեան Շար.ը՝ էջ 10

ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ



Քոչարեան կ'ընդունի Գրիգորովը:

Հայաստանի նախագահ Ռուպի Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ ներքին գործոց նախարար Պորիս Գրիգորովի գլխաւորած պատուիրակութիւնը, որ երէկ Երեւան ժամանեց Հայաստանի եւ Ռուսիոյ իրաւապահ գերատեսչութիւններու միացեալ յանձնաժողովի նիստին մասնակցելու համար:

Մեծ նշանակութիւն տալով Հայաստանի եւ Ռուսիոյ իրաւապահ մարմիններու միացեալ աշխատանքներուն, նախագահ Քոչարեան յայտնեց, որ յանցագործութեան դէմ պայքարը շատ աւելի արդիւնաւէտ կ'ըլլայ միացեալ ջանքերով:

Ռուսիոյ ներքին գործոց նախարարը ամփոփ ձեւով ներկայացուց յանձնաժողովի նիստին ընթացքին քննարկուելիք նիւթերը՝ յատկապէս ընդգծելով յանցագործներու եւ անոնց վերաբերող տեղեկութեանց փոխանակման եւ ահաբեկչութեան ու թմրեցուցիչի վաճառքի դէմ պայքարի առնչուող հարցերը:

Կողմերը գոհունակութեամբ նշեցին, որ Հայաստան եւ Ռուսիա նաեւ կը գործակցին ԱՊՀի անդամ երկիրներու ներքին գործոց նախարարներու խորհուրդի ծիրէն ներս:

ԶԱՅԵՄԱՏԵՐԻԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՆՆԵՐ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐ Ս. ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ Տ. ՌԱՄՍՅԵԼՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱՆ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան Չորեքշաբթի, 20 Մարտին ֆենիքալոնի մէջ հանդիպում ունեցաւ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի հետ: Նախարար Սարգսեան հայկական պատուիրակութեան մը ուղեկցութեամբ շարաթասկիցիին հասած էր Ուաշինկթըն, բանակցութիւններ վարելու համար յատկապէս պաշտպանութեան մարզէն ներս հայ-ամերիկեան յարաբերութիւններուն շուրջ:

Հանդիպումին ընթացքին Սարգսեան եւ Ռամսֆելտ քննարկեցին պաշտպանութեան մարզէն ներս երկու երկիրներու յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի տրամադրութիւնը 4,3 միլիոն տոլարի համարժէք ամերիկեան զինուորական օժանդակութեան առնչուող հարցեր: Կողմերը մտքեր փոխանակեցին շրջանային հարցերու եւ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող խնդիրներու շուրջ: Ռամսֆելտ շնորհակալութիւն յայտնեց Հակասահմանապահ պայքարին Հայաստանի արկղարկութեան համար:

Նոյն օրը նախարար Սարգսեան նաեւ հանդիպումներ ունեցաւ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոլֆովիցիի, արտաքին Շար.ը՝ էջ 10

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏՄԿԱՆԵԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱՄ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ խօսք առաւ ԵԱՀԿի մշտական խորհուրդին մէջ: Նախարարը Վիեննա ժամանած էր Մարտ 20ին, մասնակցելու համար նշեալ նիստին:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով ԵԱՀԿի Մինսքի խմբակի գործունէութեան, նախարար Օսկանեան անորդարութիւնը համարեց Մինսքի խմբակին ուղղուող մեղադրանքները: Օսկանեան յայտարարեց, որ Հայաստան զրահան կը գնահատէ ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներու գործունէութիւնը: Ան յիշեցուց, որ 2001ին, Շար.ը՝ էջ 10

ՉԵՅՆԻ - ԵՃԵՒԹ ԶԱՆԴԻՊՈՒՄԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՀԱՅ - ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Նոյեանց Տապան» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիբ Զէյնի Երեքշաբթի օր Անգարայի մէջ Թուրքիոյ վարչապետ Պիլէլինի հետ հանդիպումին ընթացքին բազմաթիւ հարցերու կողքին նաեւ քննարկած է Կովկասի մէջ տիրող կացութիւնը եւ յատկապէս հայ - թրքական յարաբերութիւնները:

Ըստ թրքական «Էն. Թի. Վի.» հեռատեսիլի կայանին, Թուրքիոյ վարչապետը յատկապէս նշած է, որ Շար.ը՝ էջ 10

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ խորհրդարանի փոխ նախագահ էլի Ֆերզլիի եւ երեսփոխաններ Մուհամմադ Զաֆարի, Սալէհ Նէյրի, Ուսթիհ Պարիզի, Ֆարիտ Մըքարի, Ֆայէզ Ղարնի եւ Սելիմ Սաատիի հետ քննարկեց անոնց շրջաններուն կարիքներն ու ընդհանուր հարցերը:

Հարիրի կենտրոնի նախարար Միշլի Մուսայի եւ կենտրոնի հարցերու խորհրդարանական յանձնարարներն է հետ քննարկեց մագուլթով բանող ինքնաշարժներու արգելման եւ նաւախի աղանդի հարցերը:

Հարիրի նաեւ ընդունեց պետական երկրորդական վարժարաններու մէջ պայմանագիրով աշխատող ուսուցիչներու լիկային ու բժիշկներու սենտիքայի պատուիրակութիւնները, Սաֆէս համալսարանի նախագահ հայր ժողէֆ Մըրհէբը եւ նախկին նախարար Յուսէյն Պուրթուրը:

ՆԱԽԱՐԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց խորհուրդը երէկ յետմիջօրէին իր հերթական նիստը գումարեց գլխաւորութեամբ նախագահ Կոր. Ըմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովէն կը բացակայէր պետական նախարար Նապիի Պայտուն:

Երկուրուկէս ժամ տեւողութեամբ ժողովին ընթացքին կառավարութիւնը քննեց օրակարգի վրայ եղող հարցերը եւ տուաւ համապատասխան որոշումներ, որոնցմէ ամենէն յատկանշականը եղաւ դեղերու անջուղող որոշումը, որ իրաւունք կու տայ դեղագործին, գիտականօրէն վաւերացուած դեղեր արտածող երկիրներէն (Մ. Նահանգներ, Չուիցերիա, Ճապոն) ներածուած դեղերը վաճառել իր կողմէ ճշդութեամբ յարմար նկատուող դեղով, պայմանաւ որ չանցնի առողջապահութեան նախարարութեան կողմէ ճշդութեամբ սակը:

ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Իրավիճակին, խաղաղութեան գործընթացին եւ արաբական վեհաժողովին վերաբերեալ հարցեր:

Հաղորդուեցաւ, որ Համաժողովը նամակին մէջ վերահաստատած է այս գծով Լիբանանի սկզբունքային կեցուածքը:

Ապի Ասի նամակը յանձնեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէի:

ԴԱՏԱՆԱԶՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Վեհաժողովի նախապատրաստութիւններու ծիրէն ներս ընդհանուր դատախազ Ատանա Ատուեմ երէկ նախագահեց շրջանային դատախազներու եւ գինուորական դատախազներու ժողովին, որուն ընթացքին ան շեշտը դրաւ վեհաժողովի ընթացքին պատրաստ վիճակի մէջ մնալու անհրաժեշտութեան վրայ, պահպանելու համար հաւաքականութեան եւ վեհաժողովին ապահով ընթացքը:

Ան գգուեցուց, որ այս առիթով որդեգրուած երթիւնքի եւ ապահովութեան միջոցառումները անտեսողները պիտի ենթարկուին դատական հետապնդումի:

●ՆԵՐՔԻՆ գործող նախարարութիւնը երէկ յայտարարեց, որ վեհաժողովի նախապատրաստութեանց ծիրէն ներս ստեղծած է գործողութիւններու զբաւեցնելու մը, որուն մէջ ներկայացուած են բոլոր գինուորական եւ ապահովական մարմինները:

Այս գրասենեակը 1733 թիւին վրայ այս առաւօտէն սկսեալ բիւրոյին եւ պարզ հեռաձայններէ զանգատները պիտի հետապնդէ եւ լուսարանութիւններ պիտի տայ:

ՄԱՀԱԶԴ

Տիար Անթիպաս Մարտիրոսեան
Տիար Յակոբ Մարտիրոսեան
Տէր եւ տիկին Րաֆֆի եւ Լիլի Կիւլիւմեան
եւ զաւակուրդ

Գունտաքեան ընտանիք
Ճէրէճեան ընտանիք
Մարտիրոսեան ընտանիք
Վանեցեան ընտանիք
Սթանպուլեան ընտանիք
Տէր Կարապետեան ընտանիք
Քահաբէճեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԺԱՆԷԹ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
(Ծնեալ Պէյրուօ, 1938ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 21 Մարտ 2002ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուշակալութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ 22 Մարտ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայա ընդունիլ իբրեւ մահապղծ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ռապուէ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արա Հազարեան եւ ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ եւ հարազատին՝

ԳԱՂԹՈՒՀԻ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ
(Ծնեալ՝ Մարազկօզեան)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Մարտ 2002ին, Միացեալ Նահանգներու մէջ:

●Ներկայա ընդունիլ իբրեւ մահապղծ:

ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԵՆ ՇԱՏ ԲԱՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ Գոր. Էմիլ Լահուտ երէկ հաւաստեց, որ Պէյրուէթի մէջ գումարեւելիք արաբական վեհաժողովը բաւական ինքնուրուի պատմական պիտի ըլլայ, որովհետեւ անկէ շատ բան կը սպասուի: «Արաբներու պառակտումն ու պարտութիւնը ցանկացող պետութիւնները ակնկալութիւններ ունին այս ժողովէն, որմէ շատ բան կը սպասեն նաեւ մեր արաբական ժողովուրդները, որոնք կ'ուզեն վերադարձնուիլ իրենց իրաւունքներուն եւ վերահաստատել, որ կը ձգտին արդար եւ ամբողջական խաղաղութեան, որ չի խլեր մեր արժանապատուութիւնը: Վեհաժողովը այս երկու հակոտնեայ ակնկալութիւններէն մէկուն ընդառաջելէ զատ ընտրանք չունի», ըսաւ ան:

«Նոր Զինաստան» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ նախագահ Լահուտ ընդգծեց, որ Պէյրուէթի վեհաժողովին յաջողութեան նպատող կարեւորագոյն տուեալը պիտի ըլլայ անոր ընթացքին միջնաբանական գորակցութեան բիրեղացումը, որուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ տալ յստակ եւ ուժեղ որոշումներ, որոնք կ'ընեն պատեհէ զառնալ արաբական երկիրներուն վրայ գործողող այն ճնշումներուն դէմ, որոնց նպատակն է պարտագրել մեր ժողովուրդներու շահերուն չհամապատասխանող տարազներ:

Միշլի Արեւելի խաղաղութեան համար Մէնուտակ Արարիոյ գահաժողովի իշխանին առջակին մասին նախագահ Լահուտ յայտնեց որ վեհաժողովին պիտի արժարժուի եւ անոր մանրամասնութիւններուն շուրջ խորհրդակցութիւններ պիտի կատարուին սէկտցիներուն հետ:

«Շրջանին մէջ արեւելի հակամարտութեանց վերջ դնող եւ իրաւունքը իրաւատիրոջ վերադարձնող արդար, վերջնական եւ ամբողջական խաղաղութեան վերաբերեալ արաբական երկիրներու յանձնարարութեան վերահաստատումին դիմաց իտրաջիլ կողմէ դրաձեւեղներուն հետ խաղաղութեան յստակ եւ անկեղծ փոփոխել արտայայտութիւն չենք լսած ցարդը», նկատել տուաւ ան:

Նախագահ Լահուտ հաստատեց, որ հարեկչութիւնը պատրուակ դարձած է մեծ պետութիւններու, որոնք իրենց շահերը կը հետապնդեն ուրիշներու հաշուով, «Իսկ այդ շահերու իրականացման ճամբուն վրայ կանգնողին դէմ կը բարձրացնեն զայն հարեկչութեամբ ամբաստանելու գաւազանը»:

Ան հարց տուաւ, որ աշխարհ ինչու է այսօր գորաշարժի չ'ենթարկուիր պայքարելու համար Իտրաջիլի կիրառական պետական հարեկչութեան դէմ այնպէս, ինչպէս որ Միացեալ Նահանգներ ամբողջ աշխարհը զինուորագրեցին պայքարելու համար ահհատներու հարեկչութեան դէմ:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ արաբական աշխարհը կը մերժէ Իրաքի դէմ գինուորական արարք գործելու Միացեալ Նահանգներու ճիգերը, եւ այս միացեալ կեցուածքը պիտի վերահաստատուի Պէյրուէթի վեհաժողովին: Ան կոչ ուղղեց՝ ամբողջովին եւ վերջնականօրէն ջնջելու Իրաքի ժողովուրդին պարտագրուած շրջափակումը:

ԿԸ ՆՈՒՐԵՆ

●ՇԵՐՄԻՒԹ ԹԵՂԵՆԻՍԻ
մահուան առիթով, Ամնրսեան ընտանիք (Դաճասկոս) 50ական տուրք՝ «Թնչնոց Բոյն»-ին եւ ԼՕԻԻ «Արաքսի Պուլլուրճեան» ընկերաբեռնակայան կեդրոնին:
●Նոյն առիթով, տեր եւ տիկին Զոհրապ Թորիկեան 50,000 լ.՛.՛՛ Ա. Նշան եկեղեցւոյ տիկնոջն միւրեան:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ
ԼՕԻԻ «ՆԱՅԻՐԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
40 ԱՄԵԱԿ
8 ՄԱՅԻՍ 2002

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԵ ԺՈՒՆԻԵԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՁ
Ծաղկագարդի տօնը, որ կը բնորոշէ Քրիստոսի Յաղթական Մուտքը Երուսաղէմ, արժանի շուքով պիտի տօնախմբուի ժուճի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ Կիրակի, 24 Մարտ 2002ին:
Պիտի պատարագ է պատգամ՝

ԳԵՐ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵՍԵՂԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝	ժամը 8:00
Ս. պատարագ՝	ժամը 10:00
Քարոզ՝	ժամը 11:00
Թափօր՝	ժամը 11:30
Դոմբաղք՝	կեսօրէ ետք ժամը 4:00

Սիրով կը հրաւիրենք շրջանիս հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու տոյն հոգեպարար արարողութեանց:

ԴԱՄԱԶԱՅԻՆԻ «ՊԱՐՈՅՐ ՍԵԻԱԿ» ՄԱՍՆԱՃԻՂ, ԱՅՆՃԱՐ

ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ
22-է 24 ՄԱՐՏ 2002 «ՌԱԾԻՏ ԶԱՐԱՍԷ»
ԴԱՄԱԽԻՐԻՆ ՄԷՁ, ԹՐԻՓՈԼԻ

Մասնակցութեամբ արաբական եօթը երկիրներու պետական երգչախումբերուն.

Սոյն փառատօնին Լիբանանը պաշտօնապէս պիտի ներկայացնէ՝ Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «ԿՈՄԻՏԱՍ» երգչախումբը

Գեղարուեստական ղեկավար Էմմաուէլ ԴԱՐԳԵԹ ԹԱՍԱԿԵԱՆ

«ԿՈՄԻՏԱՍ» երգչախումբին լեյոյքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 24 Մարտ 2002ին, Երեկոյեան ժամը 8:00ին:
ԾԱՆՕԹ.- Պետութեան կողմէ փոխադրամիջոցը ապահովուած է «Ճարլ Դեյու» կայարանէն (Ճաւահանգիստ), երբ ու գարձի սակ՝ 1000 լիբ. ոսկի:
ՓՈՒՐԱՏՕՆԻՆ ՍՈՒՏԵՐ՝ ԱԶՍ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒԿԻՆԵՐՈՒ ՆՈՒՐՈՒԱԾ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Դարերու ընթացքին հայ կիրք իւրայատուկ եւ անուրանալի դերակատարութիւն ունեցած է պատմութեան կերտման մէջ: Ան մասնակցած է բաժնւած է լաւ ու վատը, իր ներդրումը ունեցած է մարդկային ընկերութեան բոլոր բնագաւառներուն մէջ: Հայ կիրք եղած է մտնուի, մայր, դեկավար, քաղաքական եւ պայքարի գործիչ, լեղափոխական, արուեստագէտ, ուսուցիչ, դաստիարակ եւ այլն:



Մեծարուած արուեստագիտուհիները եւ կազմակերպիչ յանձնախումբին անդամուհիները:

Այս իրողութիւնէն մեկնած ԼՕՄԻ Շրջանային Վարչութեան դաստիարակական յանձնախումբը, երէկ 21 Մարտ առաւօտեան ժամը 10:30ին, Նշան Փայլանճեան ձեւարանի «Վասպուրական» սրահին մէջ Կանանց Միջպայային Օրունան առիթով, կայացուց իրանախայ արուեստագիտուհիներու նուիրած հանդիսութիւն:

Բացման խօսքը արտասանեց Լուիսի Թօփալեան, որ անդրադարձաւ տարիներու ընթացքին կիրքերու տարած գործունէութեան, ընկերութեան մէջ ունեցած դերակատարութեան եւ գործունէութեան իրաւունքները կ'ոտնաւորուին եւ անոնք բոլորութիւններու կ'ենթարկուին: Լ. Թօփալեան ըսաւ, թէ միւս կողմէ կան կիրք, որոնք իրենց ներդրումը ունեցած են եւ կ'ունենան պանակաւ բնագաւառներու մէջ եւ աւելցուց, թէ ձեռնարկին նպատակն է յարգել արուեստի բնագաւառին մէջ նուաճումներ արձանագրած հայ կիրքերը:

Բացման խօսքին ետք Լիպա Պէրպլեան նուագեց «Դաշնակ» կտորը: Այս խօսք տաւ ար-

ուեստագիտուհի Ժաքլին Օհանեան, որ ըսաւ, թէ կեանքն ու արուեստը հոմանիշներ են, սակայն կեանքը կը վերջանայ, սակայն արուեստը կը մնայ ու կը գոյատեւի: Ան նշեց, թէ արուեստը ժամանակի ընթացքին որոշ փոփոխութիւններ կը կրէ եւ արուեստի հասկացողութիւնը կրնայ տարբերիլ ժամանակէ ժամանակ: Արուեստը, որ նախապէս կրնար երկրորդական կամ երրորդական դիրքի վրայ գտնուիլ, այսօր բարձրացած է առաջին կարգի եւ անհրաժեշտօրէն մաս կը կապուի մարդոց առօրեայ կեանքին: Օ. Օհանեան ըսաւ, թէ հին արուեստը կը վերադառնայ նոր քննարկումով եւ անհրաժեշտօրէն հասկացողութիւն: առաջինը կը յատկանշուի պարզութեամբ եւ թափանցիկութեամբ, իսկ երկրորդը՝ խորհրդանշականութեամբ եւ վերացականութեամբ:

Դասախօսք անդրադարձաւ այն երեւոյթին, թէ կարգ մը գործեր եւ նկարներ, որոնք ինչուսէն կը խարպաւնուին, այսօր գտած են իրենց արժէքը եւ ըստ արժանւոյն կը գնահատուին: Ան նշեց, թէ ներկայիս մարդիկ գիտնան արուեստը արժեւորել ու գեղեցիկը գնահատել: Օ. Օհանեան իր խօսքը եզրափակելով ըսաւ, թէ կան արուեստագետներ, որոնք իրենց կեանքը գտած են արուեստի ճամբով, իսկ ուրիշներ, որոնք կեանքը վերանայնուցած են իրենց արուեստը:

«Այս օրը կտօնէ ետք ժամը 4:00ին տեղի պիտի ունենայ դոմբաղքի արարողութիւն, զոր պիտի կատարէ եւ անոր պատշաճի քարոզը՝

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ Ս. ՊԱՍՏՐԱԿ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԹԱՓՕՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ

Կիրակի, 24 Մարտ 2002ին, Ծաղկագարդի տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագ է քարոզէ՝

ԳԵՐԸ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Հանդիսապետութեամբ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սկիզբ ժամերգութեան՝	ժամը 7:30
Սկիզբ Ս. պատարագի՝	ժամը 9:30
Մանուկներու Թափօր	ժամը 10:00

ԳՐԱԴՈՒԱԾ Ե

Նոյն օրը կտօնէ ետք ժամը 4:00ին տեղի պիտի ունենայ դոմբաղքի արարողութիւն, զոր պիտի կատարէ եւ անոր պատշաճի քարոզը՝

ԳԵՐԸ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եկեղեցական զոյգ արարողութեանց եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԾԱԽՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

60ԷՆ 90 քառ. մեթր տարածութեամբ արդիական կառոյց, Նաիր էլ Սոթ, Օրոստրատ Ռումիի սկիզբը, «Սանթրո» Ն. ՏԵՏԵԱՆ: Դիմել՝ հեռ. 03 - 204309 քիւից:

ԻՐԱՆ ԵՐԲԵՔ ԶՕՐԱՎԻԳ ԶԷ ԿԱՆԳՆԱԾ «ՔԱՅԻՏԱ» ՑԱՆՑԻՆ

Կ'ԸՍԵ ԹԵՂԻՐԱՆ

Իրան երկհ հերթած է ամերիկեան այն ամբաստանութիւնները, թէ ամերիկեան քաղաքներու վրայ Սեպտեմբեր 11 յարձակումները կրնան իրանեան կապեր ունեցած ըլլալ:

Ամերիկեան Սի. Այ. էյ.ի տնօրէն ձորձ Թենըթ Երեքարթի օր յայտնած է. «Միայն պիտի ըլլայ նկատի չունենալ պետական հովանաւորութեան՝ ըլլալ ատիկա իրանեան կամ իրաքեան հաւանականութիւն մը», խօսելով Սեպտեմբեր 11 յարձակումներուն մասին, որոնք շուրջ 3000 զոհ խլած են:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռիզա յայտնած է, թէ իրան բնաւ զօրավիզ չէ կանգնած Աֆղանիստանի մէջ թալիպան վարչակարգին, ոչ ալ Ուսամա Պըն Լատէնի «Քալիտա» ցանցին:

«Ամերիկեան է, որ երկու չափ երկու կշիռի քաղաքականութիւն կը վարէ եւ դիւրաւ կը փոխէ իր քաղաքականութիւնը համաձայն իր առօրեայ շահերուն», ըսած է ան:

Ուաշինկթըն թեւեւ ամբաստանած է Աֆղանիստանէն խոյս տուած թալիպան եւ «Քալիտա» զինեալներու ապաստան տալու եւ Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի կառավարութիւնը ապակալունացնելու յանձնարարութիւնը: Իրան կը հերքէ ամբաստանութիւնները:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ Զորեքարթի օր իրանցիներու նոր տարին չորհուրդած է, յոյս յայտնելով, որ 1381 տարին (ըստ իրանեան օրացոյցին) իրանցիներն ու ամերիկացիները աւելի սերտօրէն իրարու պիտի մօտեցնէ:

Փաուըլ իր պատգամը ղրկած է Նեւրուզի առիթով: (ՌՈՅԹԸՐԶ)

ԿԱՐՄԻՐ ԶՈԿԱՏՆԵՐԸ ԿԸ ՍՏԱՆՁՆԵՆ ԻՏԱԼԱՑԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐԻ ՄԸ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ

ՀՌՈՄ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).— Կարմիր Զոկատներու անդամներ Հինգշաբթի օր համացանցի կայքերուն վրայ գետեղեցի տեղեկութիւններ, որոնց հիմամբ իրենք ստանձնած են իտալացի բարձրաստիճան պաշտօնատարի մը սպանութեան պատասխանատուութիւնը:

Մարքո Պիակի սպաննուած է Երեքարթի երեկոյեան Կարմիր Բանակին կողմէ, նոյն զէնքով, որով 1999ին սպաննուած էր կառավարութեան մէկ այլ բարձրաստիճան պաշտօնատարը:

Ոստիկանութիւնը կը հաւատայ, որ պատասխանատուութեան ստանձնումի յայտարարութիւնը ճիշդ է:

Պիակիի սպանութիւնը կը զուգարդիպի Իտալիոյ մէջ պաշտօնեաներ գործի ընդունելու պայմաններու ծրագրի փոփոխութեան, որուն պատճառով արդէն իսկ կարգ մը միութիւններ ընդհանուր գործադուլի կոչ ուղղած են:

Նախագահ Քարլո Զիամփի երէկ կոչ ուղղեց միասնականութեան եւ երկխօսութեան՝ պայքարելու համար ահաբեկիչներու սպանութիւններուն դէմ: «Պիակիի սպանութեան երկիւղը պէտք չէ ժողովրդագաւարութեան ուժին հանդէպ մեր հաւատքը եւ վստահութիւնը նուազեցնէ: Իտալացիները գիտեն, որ երկխօսութեամբ կարելի է լուծել բոլոր հարցերը», ըսաւ ան:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Կիրակի, 24 Մարտ 2002ին, Ծաղկազարդի տօնին առիթով, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, քարոզէ եւ քափօրին նախագահէ թեմի առաջնորդ:

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30
Սկիզբ Ս. պատարագի՝ ժամը 9:30
Թափօր՝ ժամը 11:00

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4:00ին տեղի պիտի ունենայ դռնբացեցի արարողութիւնը:
Սիրով կը հրակիրուի հաւատացեալ ժողովուրդը այս արարողութեան եւ լսելու սրբազան հօր պատգամը:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՔՐՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԹՈՒՐԸ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՔԻՐՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ՝ ԲԱՆՈՒՄՆԵՐ

ՏԻԱՐՊԵՔԻՐ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).— Թուրքիոյ մէջ բախումներ ծայր տուած են Հինգշաբթի օր ոստիկանութեան եւ քիւրտ ցուցարարներու միջեւ, որոնց պատճառով զոհ մը եւ տասնեակներով վիրաւորներ արձանագրուած են:

Իշխանութիւնները անցնող տարիներուն քրտական Նեւրուզի առիթով արգելքներ մեղմացուցած են, Տիարպեքի մէջ հաւաքներ արտօնելով, թուրք գիւնդերներու եւ քիւրտ ըմպաններու միջեւ վայրագ արարքներու նուազումէն ետք:

Սակայն խուճկութիւններ ծայր տուած են Հինգշաբթի օր միջերկրակայան Մերսին քաղաքին մէջ, երբ քիւրտ ցուցարարներ կրակներ վարած են եւ ապօրինի հաւաքէ մը մերժած են խաղաղօրէն հեռանալ:

Ըստ «Անատոլու» լրատու

տու գործակալութեան, մարդ մը մահացած է, երբ ոստիկանութեան զրահապատ մէկ փոխադրակառքը մզկիթի մը պատին «փակցուցած է» զայն:

Աւելի քան 40 ոստիկան եւ առնուազն 20 ցուցարարներ վիրաւորուած են բախումներուն ընթացքին:

Շուրջ 80 հոգի ձերբակալուած է: Պատկերասփիւռի կայաններ ցոյց տուած են մարդիկ, որոնք քարեր կ'արձակէին ոստիկանութեան զրահապատ փոխադրակառքերուն վրայ:

Այլ դէպքի մը ընթացքին, Մերսինի մէջ երկու ոստիկաններ սպաննուած են, երբ անոնց զրահապատ ինքնաշարժը կամուրջէ մը վար ինչամիջով մայրուղիի մը վրայ ջախջախուած է:

Պոլսոյ մէջ, ուր մեծ թիւով քիւրտեր կ'ապրին, ոստիկանութիւնը ջուրի

ուժեղ հոսանք արձակող խողովակներով եւ արցունքաբեր կազով փորձած է արգիլել աւելի քան հազար անձերու քաղաքին հին թաղամասին հրապարակին վրայ հաւաքուիլ:

Շուրջ հարիւր հոգի ձերբակալուած է:

Տիարպեքի արուարձաններէն մէկուն մէջ շուրջ 200 հազար հոգի խաղաղօրէն նշած է զարնանամուտը: Հանդիսութիւնները խաղաղօրէն տեղի ունեցած են նաեւ Թուրքիոյ, Պիւնկէօլ եւ Էլազիկ քրտական քաղաքներուն մէջ:

Տիարպեքիի մէջ քրտական ՀԱՏԺ կուսակցութեան ղեկավար Մուրաթ Պողլաք հաւաքուած ամբոխին ուղղելով խօսքը ըսած է. «Մեր փափաքն է, որ Անգարա հրաժարի իր արգելքներէն», քրտերէնի եւ քիւրտերու քաղաքային ազատութիւններուն առնչուած է:

ՊԱՂՏԱՏ ՄԱԿԵՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՍԱՏՏԱՄԸ ՏԱՊԱԼԵՆՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՊԱՆԱԼԻՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Իրաք վերստին բարկացուց Միացեալ Նահանգները, երբ ՄԱԿէն բացատրութիւն պահանջեց նախագահ Սատտամ Հիւսէյնը տապալելու ամերիկեան սպանութիւններուն մասին:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան Ապահովութեան Խորհուրդի 15 անդամներուն սեփականութիւնը դարձուց Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրիէն ստացած քսան հարցումները: Սապրի

հարց կու տար, որ արդեօք Ուաշինկթըն միջազգային օրէնքները չի խախտեր՝ Իրաքի դէմ սպանութիւն ուղղելով: Սապրի կը հարցնէր նաեւ, թէ ՄԱԿի զէնքի քննիչներուն մաս պիտի կազմէ՞ն ամերիկացի «լրտեսներ»: Անան հարցումները բաժնեց քանի մը մասերու եւ Ապահովութեան Խորհուրդէն պահանջեց անոնց պատասխանել մինչեւ Ապրիլ 10: Անան կը ծրագրէ Սապրիի հետ երկրորդ

հանդիպում մը ունենալ Ապրիլի երկրորդ կիսուն: Իրաքի ներկայացուցած է արցունքները եւ թաղերէլ չեն տար, որ Պաղտատ պիտի մերժէ քննիչներուն վերադարձը: Սակայն կը նախատեսուի, որ ամերիկացի ու բրիտանացի պատուիրակները Անանէն պահանջեն, որ չպատասխանէ իրաքի հարցումներուն, որոնց կրնայ պատասխանել զէնքերու յանձնախումբի գլխաւոր քննիչ Հանս Պիթս: Ամերիկացի պաշտօնատար մը ըսաւ, որ հարցումները կ'ընդգրկեն շարք մը անընդունելի պայմաններ:

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Ծաղկազարդի հայրապետական Ս. Պատարագ Կիրակի, 24 Մարտ 2002, առաւօտեան ժամը 10:00ին:

Պիտի պատարագէ եւ աւուր պատշաճի քարոզէ

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐՇ. Տ. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱՌՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆԵ ԿԵԼԻԿԻՈՅ Կ. Ղ.

Յաւարտ Ս. Պատարագի, պիտի կատարուի ոստիոնէք եւ աւանդակաւ թափօր Սերոպեան վարժարանի բակին մէջ:

Նմանապէս, կէսօրէ ետք, ժամը 5:00ին

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐ. ՇՈՊԵՒՈՐ ՏԵՐԸ պիտի կատարէ դռնբացեցի արարողութիւն եւ երեկոյեան ժամերգութիւնը:

Հաւատացեալ ժողովուրդը սիրով հրակիրուած է մասնակցելու վերոյիշեալ սուրբ արարողութիւններուն:

ՀԱՅՅԱՐ - Ի ԲԵՐԼԻՆԻ ՀԱՅ ԱՐՇԵՍՏԱԿԱՐԺՆԵՐՈՒ ՄԻՌՈՒԹԵՒՆ ԴՅԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԴՅԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիթ՝ ՓԱՍԵԱԼ ՓԱՊՈՒԾԵԱՆ Մարդը եւ Գործը

●Գեղարուեստական բաժին

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Մարտ 2002ին երեկոյեան ժամը 8:00ին, Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ, Չալքա:

Միւս կողմէ, Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն «մտային անհաւասարակչութեամբ» ամբաստանեց Միացեալ Նահանգները, որոնք ըստ կարգ մը աղբիւրներու, կ'ուզեն կորիզային զէնքեր գործածել Իրաքի եւ վեց այլ երկիրներու դէմ: Սատտամ ըսաւ, որ այսպիսի սպանութիւններ ուղղողը խելագար է եւ կարիք ունի բժշկական հոգատարութեան: Սատտամ կը հակադարձէր ամերիկեան օրաթերթի մը կողմէ հրապարակուած լուրի մը, ըստ որուն, նախագահ ձորձ Պուշ ֆենթեպալին հրահանգած է պատրաստել ծրագրերը կորիզային զէնքեր գործածելու համար եօթը երկիրներու դէմ, որոնց կարգին է Իրաքը:

●ՊԱՂՏԱՏ յայտնեց, որ ազատ պիտի չարձակէ քուէյլթի մը, որ ապօրինի կերպով իրաք մտած էր, եթէ Քուէյլթ ազատ չարձակէ իրաքի բանտարկեալները, որոնք նման յանցանքի մը համար ձերբակալուած էին սահմանակից երկիրին մէջ:

(ՌՈՅԹԸՐԶ)

Ծ. ՌՈՊԸՐԹԱՆԸ ԼԱԲԱՏԵՄ՝ ՕԹԱՆ – ՌՈՒՄԱՎ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար ձորձ Ռոպըրթսըն երէկ լաւատեսութիւն արտայայտած է ինչ կը վերաբերի Ռուսիոյ հետ բանակցութեանը՝ միացեալ նոր խորհուրդի մը կազմութեան, հակառակ տեղեկութիւններու, թէ բանակցութիւններ ձախողած են:

Չեխ հանրապետութեան մայրաքաղաքին մէջ այցելելէ ետք Նոյեմբեր 21–22ին կայանալիք ՕԹԱՆի վեհաժողովին վայրը, Ռոպըրթսըն թղթակցներուն յայտնած է, թէ երկու կողմերը տակաւին վերջնական եզրակացութեան մը չեն յանգած ինքնին խորհուրդին կամ անոր աշխատանքներուն գծով: Սակայն, բանակցութիւնները կը շարունակուին:

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Եւգենի Կուսարով եւ մասնագէտներու խմբակ մը այսօր Պրիւքաշի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենան ՕԹԱՆի փոխ ընդհանուր քարտուղար Կուէյթը Ալթընպըրկի հետ, որ քաղաքական հարցերով կը զբաղի: Անոնք պիտի փորձեն բանակցութիւնները յառաջ մղել Մայիս 14էն 15ի ՕԹԱՆի արտաքին գործոց նախարարներու Ռեյքլաւիքի ժողովէն առաջ:

Բանակցութիւններուն նպատակն է ստեղծել բեմ մը, ուր Ռուսիա իրբեւ հաւասարը պիտի նստի զինակցութեան 19 անդամներուն հետ եւ ըսելիք պիտի ունենայ որոշումներու կայացման մէջ՝ ապահովութեան յստակ հարցերու գծով:

Մոսկուա երկար տանէն ի վեր կը գանգատի, թէ իսկական ձայն չունի Ռուսիոյ եւ ՕԹԱՆի միջեւ խորհրդակցութեանց ներկայ բեմին վրայ, որ 5 տարուան Միացեալ Միայուն խորհուրդն է, որովհետեւ որոշումները նախապէս «եփած են» 19 դաշնակիցներուն կողմէ:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով երէկ Պրիւքի մէջ յոյս յայտնած է, թէ բանակցութիւնները մինչեւ Մայիսի կէսերը արգիլուածէս պիտի ըլլան:

Ան կը խօսէր Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչաք Ֆիշլըրի հետ տեսակցութեան մը ետք: (ՌՈՅԹԸՐԶ)

«ԷՖ – 16» ՍԸ ԿԸ ԶԱՆԶԱԽՈՒԻ

ՊԵՐԼԻՆ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).- Ամերիկեան օդուծի աղբիւրներ հինգշաբթի օր յայտնեցին, որ արեւմտեան Գերմանիոյ մէջ գտնուող ամերիկեան խարխախ մը մօտակայքը, փորձ - թռիչք կատարող օդանաւ մը ջախջախուած է եւ պատճառած օդաչուին մահը: Լէնտնայտի անտնէրուն վրայ թռիչք կատարելու ընթացքին «ԷՖ – 16» տիպի օդանաւը ջախջախուած է: Գէպքին քիւրացած է 26ամեայ օդաչու: Օդանաւու ջախջախումէ յաւրիսիւն հետ ռատարի եւ ռատիօ հաղորդակցութեան կապը կորսնցնելէ կարճ ժամանակ ետք: Օդանաւուն ջախջախումն ապագայ տակաւին չէ յստակացած, սակայն քննութիւնները ընթացքի մէջ են:

ԾԱՂԿԱԶԱՐԳԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Ծաղկազարդի տօնին առիթով, Կիրակի, 24 Մարտ 2002ին, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Նոր Սիւսի, Յարգի եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ՓԱՌԵՆ ԿՐԴ. ԿԱՐԴԱՆԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30
Ս. պատարագ՝ ժամը 9:30
Քարոզ՝ ժամը 10:30
Փոքրերու թափօր՝ ժամը 11:00

Նոյն օրը երեկոյեան ժամը 4:00ին, Դռնբացեցի արարողութիւն պիտի կատարուի:
Սիրով կը հրակիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու տօնակալ արարողութեանց:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻՔԿԱՆԻ ԶԵՂԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԷՍ

Նուիրուած՝ ՎԱՀԻ ՕՇԱԿԱՆԻՆ Խօսք կ'առնեն՝ ՎՐԷԺ ԱՐՄԵՆ - 25 տարուան մտերմութիւն ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ. Կ. Օշականի գործի մտերմութեան մէջ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 25 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին, Յարգ Տր Մելքոնեան քառերարարին մէջ:

ԸՐԱԿԵՐ



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՐԲ

ԾԱՌԱՏՆԿՈՒՄ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ



Ծառատնկումը մասնակցած Հ.Մ.Ը.Մ.ակաճներ:

Լիբանանի սկառուտական ֆետերասիոնի եւ Սուրիոյ Պաաս կուսակցութեան երիտասարդական միաւորին միջեւ համագործակցութեան եւ փոխադարձ յարաբերութիւններու ամրապնդման ծիրին մէջ, Կիրակի, 17 Մարտին Լիբանանի սկառուտական ֆետերասիոնի միութիւններէն ներկայացուցիչներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ականներ, Հոմսի մէջ կատարեցին ծառատնկում: Այս ծրագիրին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ ֆետերասիոնի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ, շրջանային գայլիկ ձիւղի խմբապետ Ժանօ Քէչէճեան:



Ծառատնկման պահուն:

Հոմսի եւ անոր շրջակայ վայրերուն մէջ Լիբանանի պատուիրակութիւնը Լիբանանի եւ Սուրիոյ գանազան շրջաններու եւ քաղաքներու անուններով ծառեր տնկեց:

Ծառատնկումէն ետք տեղի ունեցան խօսքերու եւ յուշանուէրներու փոխանակում Լիբանանի սկառուտական ֆետերասիոնի եւ Սուրիոյ Պաաս կուսակցութեան երիտասարդական միաւորին միջեւ: Երկու կողմերը հաստատեցին իրենց պատրաստակամութիւնը՝ համագործակցութեան ծիրը ընդարձակելու ուղղութեամբ:

Ծառատնկումին ներկայ էին նաեւ տեղական մամուլի եւ տեղեկատուական մարզի ներկայացուցիչներ, որոնք հարցազրոյց ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներուն հետ:

Յայտնեք, թէ 2 շաբաթ առաջ Սուրիոյ Պաաս կուսակցութեան երիտասարդական միաւորը այցելեց Հարաւային Լիբանան եւ ինք իր կարգին ծառատնկում կատարեց:

ՍԿԱՌԻՏ

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿ

Հայաստանի Մշակույթի Հայկական Ֆոնդին մէջ կայացած է Համօ Սահեանի նուիրուած «Բանաստեղծը, մտածողը, մարդը» գիրքին քննարկումը: Գիրքին մէջ տեղ գտած են շարք մը գրողներու, գրականագէտներու, պետական ու հասարակական գործիչներու յուշերը, կարծիքներն ու մտորումները: Տպագրուած են նաեւ Համօ Սահեանի խոհափոխութեան փայլուն րանատեղծութիւններէն:

Մշակույթի Հայկական Ֆոնդի նախագահ Արեւշատ Աւագեան խօսած է Հ. Սահեանի կեանքին եւ անոր ձգտած գրական ժառանգութեան մասին:

Գիրքին մէջ տեղ գտած յօդուածներն ու գրողները կազմած են Շիրազ Դաւթեան, որ նշած է, թէ գիրքին պատրաստութիւնը թէեւ մեծ ջանք պահանջած է, սակայն անիկա մեծ արժէք ունի: Ան աւելցուցած է, թէ գիրքին մէջ կարելի չէ եղած ամփոփել Սահեանի վերաբերող բոլոր յօդուածները, եւ նշած է, թէ կարելի է ասոր համար երկրորդ գիրք մը եւս լոյս ընծայել:

Զեռնարկին ընթացքին գործադրուած է նաեւ գեղարուեստական յայտագիր, որուն ընթացքին Սահեանի րանատեղծութիւններէն քանի մը հատը ներկայացուած են:

www.lemagan.com

ՄՈՍԿՈՒԱ ԴԵՄ՝ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՓԱԿՄԱՆ

Վերջերս պաշտօնական այցելութեամբ Մոսկուա գտնուող Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ Գաբրիէլ Ասլանեանի գլխաւորած խորհրդարանական պատուիրակութիւնը շարք մը հանդիպումներ ունեցած է ուսուիրող-դարանակներուն հետ, ինչպէս նաեւ րանակցութիւններ վարած է շարք մը պաշտօնատար անձներու հետ:

Հանդիպումներուն ընթացքին ուսական կողմը մտահոգիչ հետաքրքրութիւն ցուցաբերած է Հայաստանի կորիզային կայանի ներկայ վիճակին հանդէպ: Ռուսիոյ Դաշնութեան Նորհուրդի վերին պալատի ԱՊՀի հարցերու կոմիտէի նախագահ Վատիմ Կուլիսով ըսած է, թէ Հայաստան ի գուր խոստացած է Եւրոպական Միութեան հայկական կորիզային կայանը փակել:

Հայ խորհրդարանականները ժխտած են Եւրոպական Միութեան կորիզային կայանի փակման խոստում տալու մասին լուրը:

Ռուսական կողմը յայտնած էր, որ եթէ կորիզային կայանը փակելի, ապա Ռուսիա պիտի հրաժարի Հայաստանի մէջ ներդրումներ կատարելու իր մտադրութենէն: Ռուս խորհրդարանականները նշած են, որ արտադրելով մեծ քանակութեամբ էլեկտրականութիւն՝ Հայաստան կ'ունենայ Վրաստանի վրայ ազդելու զօրաւոր լծակ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԱՆՅԵԱԼ տարուան ընթացքին Հայաստան մուտք գործած է 25 միլիարդ դոլար արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն (մօտաւորապէս 44,2 միլիոն տոլար), ըստ կառավարութեան Մարդասիրական Օգնութեան կեդրոնական յանձնախումբի նախագահ Վլատիմիր Մովսիսեան: Օժանդակութիւնները ձեռք բերուած են երկրին մէջ բարեփոխական ծրագիրներ իրականացնող 147 տարբեր կազմակերպութիւններու կողմէ, որոնք 36 երկիրներէ ապահոված են նշեալ գումարով օգնութիւնները:

Հայաստան հասած մարդասիրական օժանդակութիւններուն 33 առ հարիւրը եղած է սննդամթերք, իսկ 28 առ հարիւրը՝ առողջապահական սարքեր: Օգնութիւններուն 50 առ հարիւրը հասած է Ամերիկայէն, 13 առ հարիւրը՝ Իտալիայէն, իսկ 8 առ հարիւրը՝ Մոլդովիայէն:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ պետական եկամուտներու նախարար Երուանդ Ջախերեան յայտնեց, որ երկրին մօտաւորապէս 9000 պաշտօնեաներէն ցարդ 6300ը գրաւոր արձանագրած են իրենց ինչքերուն եւ կալուածներուն մասին (չէջեք-չինութիւն, հանրային կամ արտադրական կառուցներ, հողեր եւ այլն), իսկ մնացեալները շտապաւորաբար մինչեւ յառաջիկայ 1 Ապրիլ պետական եկամուտներու նախարարութեան կը յանձնեն համապատասխան փաստաթուղթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԶԱՒԱԽԵԻ ՄԵՋ 15 ԴՊՐՈՅ ԵՒՍ ՊԻՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻ

Բարեսիրական գանազան կազմակերպութիւններու, որոնց կարգին՝ ՀՕՄԻ եւ «Հայ Կրթական Հիմնարկութեան» նիւթական աջակցութեամբ, երկրաշարժէն ետք, տարիներու ընթացքին Աղէտի գօտիին մէջ վերանորոգուեցան շարք մը ուսումնարաններ:

Հիմնականօրէն Սփիւռքի դպրոցներուն օժանդակող կազմակերպութիւնները Հայաստանի սահմանամերձ շրջաններու՝ Լոռիի, Տաւուշի, Գեղարքունիքի, Սիւնիքի գիւղերուն, ինչպէս նաեւ Քաշաթաղի եւ Լաչինի մէջ 1999 թուականին նախաձեռնեցին շուրջ 50 դպրոցներու վերանորոգութեան աշխատանքներու: 2000 թուականին, «Հայ Կրթական Հիմնարկութեան» 50ամեայ յրեւանին առթիւ, երկրամեայ ծրագրով վերջացաւ եւ սկսաւ անոր երկրորդ հանգրուանի գործադրութիւնը:

«Հայ Կրթական Հիմնարկութեան» տնօրէններու խորհուրդի անդամ, «Հայաստանի դպրոցաշինութիւն» ծրագրի յանձնախումբի նախագահ Նշան Փիրումեան ըսած է, թէ ծրագրը բաւական ոգեւորիչ եղած է, եւ 2001ին Հայաստանի մէջ վերանորոգուած են 17 դպրոցներ, իսկ 3 դպրոց՝ Զաւախքի մէջ:

Իր գործունէութիւնը շարունակելով՝ կազմակերպութիւնը այս տարուան ընթացքին պիտի վերանորոգէ 13 դպրոց Հայաստանի եւ 2՝ Զաւախքի մէջ:

Այսպիսով «Հայ Կրթական Հիմնարկութիւն»ը վերանորոգած կ'ըլլայ շուրջ 72 դպրոց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

ՍՓՆԻՌՔԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՄԵԾ ԱՃ Կ'ԱՐՉԱՆԱԳՐԷ

Հայաստանի պետական համալսարաններուն մէջ վճարովի կամ ձեռնարկ սփիւռքահայերուն թիւը վերջին քանի մը տարիներուն մեծ աճ արձանագրած է, եւ այսօր անոնց թիւը կը հասնի 1050ի: Հայաստանի մէջ ուսանելու դիմում ներկայացնողներուն առաջին դերքը կը գրաւեն Վրաստանի, Ռուսիոյ եւ Իրանի ուսանողները, անկէ ետք կու գան լիբանանահայերն ու սուրիահայերը: Հայաստանի մէջ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար դիմումներ ներկայացուցած են նաեւ Յունաստանի, Ֆրանսայի եւ Կիպրոսի մէջ բնակող հայ երիտասարդներ: Այս տարի համալսարան ընդունուած են նաեւ ուսանողներ Ուրուգուէյէն եւ միջին ասիական պետութիւններէն: Վերջին շրջանին բարձրացած է ճարտարագիտական համալսարանի սփիւռքահայ ուսանողներուն թիւը: 1999ին հոն կ'ուսանէին 30 սփիւռքահայեր, 2000ին՝ 40, իսկ 2001ին՝ 64:

Լեզուաբանական համալսարանին մէջ 1999 թուականին 8 սփիւռքահայ ուսանողներ կային, 2001ին՝ 15, տնտեսագիտական հիմնարկին մէջ համապատասխանաբար 42 եւ 56, Վանաձորի մանկավարժական հիմնարկին մէջ՝ 8 եւ 10, մանկավարժական համալսարանին մէջ՝ 102 եւ 232, ղեղարուեստական ակադեմիային մէջ՝ 10 եւ 18, իսկ երաժշտանոցին մէջ՝ 22 եւ 33 ուսանող:

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՀՐԱՉ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

7 Մարտին Երեւանի թիւ 16 դպրոցին մէջ տեղի ունեցած է ազատամարտիկ Հրաչ Գասպարեանի Յիշատակին նուիրուած հանդիսութիւն մը: Հանդիսութեան ներկայ էին եւ խօսք աւելն նահատակ ազատամարտիկ ընկերները, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Արտաշէս Շահբազեան, դպրոցին տնօրէնը եւ իրերունի համայնքի թաղապետ Մ. Սեդրակեան:

Հրաչ Գասպարեան 1989 թուականին սկսեալ մասնակցած է արցախեան ազատագրական պայքարին Բերդաձորի շրջանին մէջ, ինչպէս նաեւ՝ Շահումեանի Հայ Ռիւր, Մանաշիղ, Էրքէջ եւ Բուզլուխ գիւղերուն մէջ: 1992 թուականի Մայիսին ան մաս կազմեց Շուշիի ազատագրութեան համար կռուած Հ. Յ. Դ. կամաւորական ջոկատներուն, այնուհետեւ ծառայութեան անցաւ Շուշիի առանձնակի գումարտակին մէջ: Մասնակցած է Մարտակերտի, Աղտամի, Քելրաջի, Զանգեշանի եւ Ֆիզուլիի ազատագրութեան համար մղուած մարտական գործողութիւններուն:

1993ին Հրաչ Գասպարեան ստացած է սպայի աստիճան. նահատակուած է 1994ին, Ֆիզուլիի ազատագրութեան համար մղուած մարտերուն ընթացքին:

«ԱՉԴԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր աճուք, որոնք կը փափաքին «Ազգայի» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնել հրատարակման թուականը առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյան փԱՄԸ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՐՑԱՉՐՈՅՑ ԳԱՆՉԱՅԻ ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ Ա. ԹՈՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ



Վահան Տերեանի տուն-թանգարանը

ՀԱՐՑՈՒՄ.- Մի քանի խօսք Գանձա գիւղի շրջակայքում առկայ հոգեւոր եւ աշխարհիկ մշակութային կենտրոնների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Պէտք է ասել, որ Գանձա գիւղը բաւականին հարուստ է մշակութային կառուցներով: Յիշատակներ Ս. Յովհաննէսի մատուցը, Ս. Սարգիսի մատուցը, Քէօռ-Օղլի քարաչէն ամրոցը, մի քանի վրացական եկեղեցիներ, յուշարձան-կոթող՝ որը յաւերժացնում է հայրենական պատերազմում զոհուածների յիշատակը, գիւղական մշակույթի տունը, երկու միջնակարգ դպրոցներ: Այս բոլորի շարքում իր ուրոյն տեղ ունի գիւղի կենտրոնում գտնուող այն տունը, որտեղ ծնուել ու հասակ է առել Վահան Տէրեանը. թանգարանը եւ գիւղական եկեղեցին, որը կառուցուել է 19րդ դարի երկրորդ կէսին Վ. Տէրեանի պապի եւ հօր անմիջական նախաձեռնութեամբ ու անձնական աշխատանքով:

Հ.- Արդեօք բարեկամաբար ազդեցութիւն ունենալու մշակութային կենտրոնները բնակչութեան վրայ:

Պ.- Ի՞նչ խօսք: Նախ պէտք է ասել, որ դրանք հոգեւոր ու կրթական մեծ բաւականութիւն են պատճառում տեղացիներին, որը կ'եռապատկուի, եթէ դրանք գտնուեն բարեւոք վիճակում: Մեր գիւղացիները արտագաղթի տեսակէտից ամբողջ Զաւախքում մասնացածի ցուցանիշներն ունեն: Այդ դրական երեւոյթը կարելի է բացատրել նաեւ բաւարար մշակութային օժանդակ ունենալով: Գանձացին շատ ամուր է կապուած իր հողին ու ջրին: Իսկ եթէ փոքրիշատէ բարեկամի զիւղի հոգեւոր մշակույթը, դրութիւնը ակնյի լաւ կը լինի:

Գանձացին շատ լաւ է գիտակցում, որ ժողովրդի յարատեւման եւ ազգապահպանութեան համար հսկայական նշանակութիւն ունի մշակույթը, նրա օժանդակի պահպանումը, նրանց փրկելը վերահասարակական միջոցներով:

Նախ վստահօրէն պէտք է ասել, որ հայ մեծ բանաստեղծ եւ պետական գործիչ Վ. Տէրեանի տուն-թանգարանը եւ նրան կից գիւղական եկեղեցին, իր բակով հանդերձ, ներկայացնում է մի ներդաշնակ մշակույթի համալիր ոչ միայն Գանձայում ու Զաւախքի շրջաններում, այլ նաեւ՝ ողջ հայ մշակութային համակարգում: Ուրեմն պէտք է որոշակի հետեւողականութիւն եւ սրտացաւութիւն ցուցաբերել դրանք պահպանելու եւ փրկելու համար: Այդ փոքր հարցը լուծելու համար անհրաժեշտ է կատարել հետեւեալ աշխատանքները.

- 1.- Վերանորոգել հին տան երկու վթարային սենեակները:
- 2.- Անցկացնել էլեկտրական լոյս տուն-թանգարանում եւ եկեղեցում:
- 3.- Վերանորոգել թանգարանի երկու սենեակների պատերը:
- 4.- Ապակեպատել պատուհանների ջարդուած ապակիները:
- 5.- Փոխել թանգարանի բակի երկու դարպասները (եղբի եւ մուտքի):

Գանձայի եկեղեցին, որ կառուցուած է էլմիածնի եկեղեցու նմանակութեամբ, մի հիանալի ու հոյակերտ շինութիւն է, որի պահպանումը անբեւեակայելի շնորհակալ գործ կը լինի: Առաջմ պէտք է կատարել եկեղեցու արտաքին մասի պահպանութեան աշխատանքներ: Դրանք են՝

- 1.- Եկեղեցու տանիքը մաքրել քայքայող բուսական ծածկոյթից:
- 2.- Տանիքի տեղաշարժուած քարերը տեղադրել եւ յուսալի ամրացնել:
- 3.- Փոքր գմբէթի քայքայուած որոշ տեղերը նորոգել:
- 4.- Փոխել եկեղեցու հին դուռը:
- 5.- Եկեղեցու դրսի պատերի մէջ առաջացած ճեղքերը միջբարային տարածքները ձեփել առաւել ամրացնող նիւթերով:
- 6.- Նորոգել եկեղեցու փայտաշէն օթեակը:

Իսկ ընդհանրապէս տուն-թանգարանի եւ եկեղեցու հիմնական վերանորոգումը եւ վերջնական տեսքի բերելը մեծ ջանքեր ու ծախսեր է պահանջում եւ մեծ յոյսով ու համբերութեամբ սպասում իր մեծահոգի մեկենասին ու բարեգործին:

«Ա. ԻՆՖՕ»

www.hamazkayin.com

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍ...

Շարունակում՝ 7րդ էջէն

կեանքը շրջապատում է մեր կեանքին: «Մոնսթր»-ները (հրէշներ) կը սարսափին մարդոց մէջ ու երեխաներէն եւ կը փորձեն կարելի բոլոր ձեւերով պաշտպանուել անոնցմէ: Սակայն երկու հրէշներ կը հակառակին ընդունուած օրէնքին եւ կը բարեկամանան փոքրիկ աղջկան մը հետ: Իւրաքանչիւր պատրաստութիւն մը, ուր Սալի հրէշին ձայնով հանդէս կու գայ ձոն կուտմէն:

րուն համար կը ցուցադրուի «Բոլթթըրը տէմէն» ժապաւէնը: Տիպար հրէշէի դեր ստանձնած Առնոլտ Շուարցընէ կը իր կնոջ ու զաւակին վրէժը լուծելու համար կ'որոշէ սպանել Գոլմուրտի անտառներուն մէջ ապաստանած ահաբեկիչ մը: Առնոլտեան հերոսութիւններ, փախուստ, արիւն, քրտինք, կրակ եւ մեծաքանակ պայթուցիչներ հրամցնող ժապաւէն մը: Զարմաշալիչ է, որ 11 Սեպտեմբերէն

րէն ետք շարժապատկերի հրապարակ նետուած է «վրիժառու հրէշէի» այս տիպարը մեծ յաջողութիւն արձանագրած է Միացեալ Նահանգներու մէջ:

Լիբանանեան սրահներ հասած են նաեւ թունոգեան եւ իրանեան երկու ժապաւէններ: «Լէ սիեսթ կրէշնտին» կը ներկայացնէ մշակութային բազմաթիւ ենթահոգերով (Ֆրանսացի, արիւն, իսլամ) երիտասարդուհի մը հայրենիք վերադարձը եւ ընկերութեան հետ անոր համարկումը: Միւս կողմէ, «Լէ թէյսթ աֆ չէրի» իրանեան դասական ժապաւէն մըն է, ուր երիտասարդ մը կը թափառի Թեհրանի փողոցներուն մէջ՝ փորձելով գտնել իր անձնապահական փորձին ընկերակից մը: Երկու ժապաւէնները լուսարձակի տակ կ'առնեն ընկերութիւններուն պարտադրած արժեքները եւ կը յիշեցնեն, թէ կեանքը տարբեր ձեւերով կրնայ գեղեցիկ ըլլալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

ղանկարներ, դժանկարներ, լուսանկարներ, երեք ուղղութեամբ համադրումներ, քանդակներ, ժապաւէններ եւ լուսանկարներով իրագործուած տարածասարքային գործեր:

Պատկերասրահին պատասխանատուները՝ Փաթրիսիա Մըրֆի եւ Սիւզան Ֆիլիպսընը, թէ ցուցահանդէսին ընդմէջէն արուեստագէտները կը ներկայացնեն պատմականօրէն անտեսուած ազգային մաքրագործումի մը ազդեցութիւնը սերունդներուն վրայ, անոնք նաեւ բառի, տպագրութեան, քանդակագործութեան եւ լուսանկարչութեան ընդմէջէն կը պատկերեն այս ցնցումին անդրադարձը, որ իր արձագանգը պիտի գտնէ նմանօրինակ ճակատագիր մը ունեցող այլ մշակոյթներու մէջ:

Ցուցահանդէսին առիթով հրատարակուած է գրքոյկ մը, որ հայ ժողովուրդին մասին կը բովանդակէ տեղեկութիւններ:

Ցուցահանդէսին կը մասնակցին Թինա Պասթանեան, Ժան Մարի Գասպարեան, Ալլին Քլաւել, Ժաքլին Տուստեան, Տալիա Ալսայէտ, Էլիզա Ռաչեան, Ճան Մաստեսեան, Նաոմի Փրիսեան եւ Ալլին Շահպազեան:

«Ժառանգութեան ծրագիր»-ի մասին տեղեկութիւններ հրատարակուած են համացանցի հետեւեալ կայքին մէջ: <http://inheritance.beaconst.org>

BALTAYAN ELECTRIC

TUNGSRAM

for a brighter world



80% ԵՆԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒԱՋ ՍՊԱՌՈՒՄ

ՍՊՈՐՏԱԿԱՆ ԼԱՄՔԵՐ 10 ԱՆՉԱՄ ԱՒԵԼԻ ԴԻՍԱՅՈՂ

ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏ ԵՆ ԵՐԿՐԱՍԵՒԵ ԼԱՄՔԵՐ

Ա. մասնաճիւղ Պորժ Համուտ, Արմենիա պողոտայ, հեռ. 262901
Բ. մասնաճիւղ Տորա, հեռ. 261800, 259600

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ ԸՍԿՈՒՄ

Այսու կը յայտնենք մեր ժողովուրդին, թէ այսօր՝ Ուրբաթ, 22 Մարտին, երեկոյան ժամը 6:30ին, Լորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, հսկումի արարողութեան ընթացքին պիտի քարոզէ՝

ԸՆԴՈՒՍ. Ս. ՓԱՆԵՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ մերկայ ըլլալու եւ ունկնդրելու օրուան պատգամը:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Yerevan

Armenian products

Gifts For Any Occasion



Address: Bourj Hamoud, Municipaliic Street, Facing Center Arine, # 63 Street/Fax: 01/254747
Tel.: 01/254747 - 03/348105. E-mail: tammy@lynx.net.lb

ԿՈՒՉՈՒՄ

ՊԵՅՐՈՒԹԻ ԵՒ ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԳՈՐԾԻ ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻԹ

Լիաժամ կամ մասնակի ժամեր, ամսական եկամուտ 800\$, նաեւ Լիբանանէն դուրս աշխատելու առիթ:

Ինքնաշարժ օրմենալը պայման, 25 տարեկանէն մինչեւ 50 տարեկան:

Մանրամասնութեան համար դիմել հեռ. 01-878888 քիւիմ

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐ

VIDEOԻ ՎԱՄ ՇՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՍԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԶԵԷԷՃԵԱՆ ՇԱՍՏ.
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5106

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՒԹՆԱԿԱՆ	ՈՒՂԱԿԱՅԵԱՑ
1. Մաս, բաժին:	1. Անփորձ - Թիւրքալէ կեռաս:
2. Հայաստանի առաջին մայրաքաղաքը - Այրուբենէն:	2. Քաղաքապետը - Այրուբենէն:
3. Դիւրահալան - կենդանական սննդանիւթ:	3. Օրինակել - Կշիւ:
4. Խօսք - Գիշատիչ թռչուն:	4. Բեւեռ - Արօր մաքրելու զաւազան:
5. Ոչիւրի հակկիթ Շունիս:	5. Շիճուկ - Դրկից տառեր - Կրկնուած ձայնաւորներ:
6. Բախուկ, խնթուկ Սաճիլ:	6. Մէկուսն դէմ շարիք նիւթի - Հայ տղայ:
7. Սպասէ՛:	7. Տարածքի միաւոր - Երբեք Սեպտեմբերի օրը:
8. Ստալինի անուանուածը - Բաց տարածք:	8. «Զօրաւոր» խաղաթուղթ:
9. Ամերիկեան համայնուն գետ եւ ջրվէժ (հակ.):	9. Հաւաք - Լիբանանի գետերէն:
10. Սատակ - Մարդեան քաղաք:	10. Գիտաւորի պոչ - Ժողով:

1 2 3 4 5 6 7 8 9 10
1 Ն Ա Մ Ո Ղ Վ Ն Ս Ո Վ
2 Ա Ր Ո Ւ Ե Ս Ս Գ Ի
3 Կ Ի Ն Ե Կ Ա Տ Ե Լ
4 Ս Ա Ր Ե Կ Ա Ն Լ Ա
5 Ա Տ Ա Տ Տ Տ Տ Տ Տ Տ Տ
6 Ա Կ Ա Վ Կ Ա Ո Ր Գ
7 Ա Կ Ա Վ Կ Ա Ո Ր Գ
8 Գ Է Լ Ե Բ Ս Տ Տ Տ Տ
9 Ա Ս Ա Ր Ո Ն Ա Ղ Ա
10 Ն Գ Ե Բ Մ Ն Ի Կ

Գրատուն

ՈՍԿԵԴԱՐ

• Ունինք ձեր փնտրած գիրքերը եւ բառարանները

• Ոսկեդարի ԵՐԱԶԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր


• Զարգացումի միահատոր Համայնագիտարաններ՝

Պորժ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցւոյ կից Հեռ. 01/264750
P.O.Box 11-8877 Beirut Lebanon

ՊՐԱՍԵՏՐ

ՇՈՒԹՆԱԿ

Panasonic



Թ.Է.Լ. 10:00.- Սապահո 13:00.- Մաքրու հանա

14:00.- Երոտնիւն 14:30.- Լուրեր 15:00.- Արաք. ֆիլմաշար 17:00.- Պէտք սելըր 18:00.- Շըրի Հոյմ 18:30.- Արաքական ֆիլմաշար

19:30.- Արաք. լուրեր 21:00.- Մեխաս 22:00.- Ամերիկ. ժապաւէն 23:00.- Սի չէյն

ԵՄ. Թ.Վ.Ի. 7:30.- Թէյ 9:30.- Քիիփս

10:30.- Քի է քի 11:00.- Ուս թրնաս 11:30.- Քըլ մէյլէ այլէ 12:00.- Էմ. Թ.Վ.Ի. սփորթ

12:30.- Էս. Լ. Շի. 13:00.- Մարիա Սեյթքէ 14:00.- Փորնայ Տրանս 2 14:30.- Սի. Էն. Էն. Կ լուրեր 15:15.- Աղանի աղանի 16:30.- Փոքրնոն 17:00.- Միսի սփիւտի 17:45.- @էմ. Թ.Վ.Ի. 18:45.- Էնտրոտ 20:00.- Արաքերէն լուրեր 20:30.- Ուսիտ 21:30.- Քիիփս 22:45.- Էն. Պ.Է. Լ. Էրըն 23:45.- Էն. Պ.Է. Լ. Էրըն

Ե.Պ.Ս.Ե. 7:00.- Սի. Էն. Էն. Կ լուրեր 7:30.- Լէրի Քիիկ Լայֆ

08:25.- Մա իւրաք իլլա <այֆ>

09:00.- Յոթ էփա 09:30.- Ինսայտ Երոտի 10:00.- Մարպակ 10:30.- Նահապետ սայիտ 14:00.- Էսմերայտա 15:00.- Լուրեր 15:15.- Ինսա ուս անա 16:15.- Փէփսի միւլիքա 17:00.- Լէրս ֆայնտ աուր 17:30.- Ճիլլա 18:00.- Կենդանի գոմակար

19:00.- Հայրաի ապակ 20:00.- Արաքերէն լուրեր 20:30.- Մարի ուս անա 21:30.- Ես մէյլէ սայն

23:30.- Թէյթօթ 00:00.- Ամերիկ. ժապաւէն

ՍՈՒՍԹԱՓՊԱԸ 7:00.- Լուրեր 8:30.- Այլմալ սապահ

13:00.- Յիշէ ինֆօ 14:00.- Անգլերէն լուրեր 14:20.- Յրասներէն լուրեր 14:40.- Հայերէն լուրեր 15:30.- Արաք. ֆիլմաշար 16:30.- Թէյթօթի 17:00.- Լյուր ըրպար 17:30.- Ամերիքայ ֆանիէս հոմ վիտօս 18:00.- Արաքական ֆիլմաշար 19:00.- Տոսրնի Բրիք 20:00.- Արաքերէն լուրեր 20:30.- Բուսուլ Մուրախարիա մէլիոն 20:32.- Ման սակարպիս մէլիոն 21:30.- Ամերիկեան ժապաւէն՝ «Միսիլընի ալտէնթի» 23:30.- Լա ֆամ Նիքիթա

Ե.Պ.Է.Լ. 15:00.- Լուրեր 16:00.- Ման ու ֆիլմ 17:00.- Աուսիլի ֆիլմաշար 17:20.- Սիլիոն 35 mm 18:00.- Քիլլա 18:15.- Տրիսա ուրբայա 19:00.- Լուրեր 20:30.- Արաքական յայտագիր

22:00.- Մասայա 23:00.- Թաիքի ալ Եսուլ 23:30.- Մարպակ լուրեր 00:00.- Լուրեր

Ե.Պ.Է.Լ. 7:30.- Լուրեր 8:00.- Սապահ Լուրեր 12:30.- Մատարաք 13:30.- Եգիպտական ֆիլմաշար

14:00.- Լուրեր 15:00.- Վաւերագրական 16:00.- Հիւրապարտուլ 17:00.- Ուսիլի ֆէյիլի 18:00.- Մարի ուս անա շարիֆա 18:30.- Մարիա Նուր 19:30.- Լուրեր 20:30.- Պէտք սելըր

21:30.- Մարպակ 23:30.- Արաքական ժապաւէն

Շ1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԵՏՈՒԹԻՒՆ 06:00.- Առաջին ծրագիր 07:00.- Հայրուր 08:00.- Առաջին ծրագիր 08:25.- Պոքեմ 09:00.- «Սիրոյ կախարդանք» 09:45.- Կէսգիշերային ձայնաքաղաք 10:40.- Բարի ախորժակ 11:00.- Հայրուր 11:20.- Բուսիլիոն + 15:00.- Հայրուր 15:20.- Երաժշտական ֆիլմ «Երեւանեան շարունակներ» 15:30.- «Կորուսած մանկութիւն» 17:00.- Երեկոյան Երեւան 17:20.- Ծիծաղի տուն 18:00.- Մանրամասներ 18:10.- Այլուր 18:20.- Եկեղեցական կեանք 18:35.- Տուն-տունիկ 19:00.- Հայրուր 19:50.- Արակի նշան 20:00.- Փաստագրական շարունակներ 20:25.- «Պարսկերէն» 21:00.- Արաքական լուրեր 21:30.- Երեկոյան Երեւան 22:00.- Կէս գիշերային ձայնաքաղաք 23:20.- Հայրուր (նուսերէն) 23:25.- Հայրուր (անգլերէն) 23:30.- Երեկոյան Երեւան 23:45.- Այլուր 23:55.- Եկեղեցական կեանք 00:10.- Փաստագրական ֆիլմ «Գանձասար» 00:30.- «Յուսոյ Աստղ» 03:20.- Ծիծաղի տուն 04:00.- «Պարսկերէն» 04:50.- Երեկոյան Երեւան 05:05.- Պոքեմ 05:40.- Մանրամասներ 05:50.- Այլուր

(* Վերաբնակ յայտագիրները ենթակաւ կըրնան ըլլալ որչէ փոփոխութիւններու:

ԹԻՒ 5105


ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻՆ Հ. Մ. Ը. Մ.Ի ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Այսօր՝ Ուրբաթ, Էօ. Էն. Պէ.ի դաշտին վրայ փինկ փոնկի զարնանային մրցաշարքին ծիրին մէջ Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկները կը կապարեն մրցաշարքի իրենց առաջին մրցումները, ժամը 5:30էն սկսեալ:

Մրցաշարքը թէ՛ սկսաւ երէկ, սակայն Հ. Մ. Ը. Մ. իր մրցումներուն կը սկսի այսօր, նկատի ունենալով, որ առաջին օրուան մրցումներուն իրենց մասնակցութիւնը թէ՛րին համեմատաբար աւելի ցարկաւ դասուած խումբեր:

Մրցումները տիրի ըլլան աղջիկներու եւ փոքր անհասակ մրցաշարք մը, մասնակցութեամբ՝ 25 ակումբներու եւ շուրջ 75 մարզիկներու:

Հ. Մ. Ը. Մ. մրցաշարքին իր մասնակցութիւնը կը բերէ վեց մարզիկներով: Աղջկանց մրցումներուն կը մասնակցին՝ Լիզա Պարիկեան, Լարա Քէշիդաշեան եւ Նոէլ Քէշիշեան, իսկ փոքր մրցումներուն՝ Ռազմիկ Շեմեմեան, Ալֆրէդ Նաժըմ-Սարգիսեան եւ Մարուան Մըրջի:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՎՈՒՄԲԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍԻ ԱՂԶԻԿՆԵՐԸ ՀԱՍԱՆ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ

Ղապիթի դաշտին վրայ տեղի ունեցող արաբական ակումբներու ախոյեանութեան մրցաշարքին, երէկ Սաժէսի աղջիկները կէտերու մեծ տարբերութեամբ՝ 109-47 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Եգիպտոսի Աիլին ապահովեցին կիսաարտական հանգրուանին իրենց տոմարը, գրաւելէ ետք իրենց խմբակին պարագլուխի դիրքը:

Կիսաարտականին, անոնք իրենց դէմ պիտի ունենան եգիպտական այլ խումբ մը՝ Սփորթինկը, որ բաղդատմամբ Աիլիի կը նկատուի Կօրաւոր մրցակից մը:

Տղոց կիսաարտականի ճակատումները իրարու դէմ պիտի հանեն, առաջինը՝ Սաժէսը եւ Մոլոտիէն (Ալճերիա), իսկ երկրորդը՝ Ժեպիւրան եւ Իթիհատ Սաքանտարին:

ՍԿՈՎՏՈՅ ԴԵՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԼԸՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՀՐԱԻՐԵՅ ՄԱՐԼԵՆ

Ֆրանսայի ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ Ռոժէ Լըմէր, երէկ ազգային խումբը հրաւիրեց Ֆուլիէմի յառաջակա Սթի Մարլէն, յառաջիկայ շաբաթ Սկովտիոյ դէմ տեղի ունենալիք ֆուտպոլի միջազգային բարեկամական մրցումին համար, որ տեղի պիտի ունենայ «Սթատ տը Ֆրանս»ի մէջ: Ան, վերջին անգամ ազգային խումբին շապիկը կրած էր անցեալ Սեպտեմբերին, Չիլիի դէմ:

Լըմէր իր կազմէն դուրս ձգեց սակայն Եուրի ճորքայէֆը (Պոլթըն) եւ Նիքոլա Անելքան (Լիվըրպոլ), որոնք կը պայքարին անպայման տեղ մը ապահովել անոր կազմին մէջ, մասնակցելու համար 2002ի Մոնտիալին: 33 տարեկան ճորքայէֆ, որ ձմեռնային արձակուրդին ընթացքին Քայլերբաւաթըրնէն միացաւ Պոլթընի, վերջին անգամ ազգային խումբին հետ դաշտ ներկայացաւ անցեալ տարի, միջամասնամասային ֆուտպոլի մրցաշարքին:

Ֆրանսայի ֆուտպոլի ազգային խումբը լաւապէս պատրաստելու համար 2002ի Մոնտիալին, Լըմէր կը յայտնէ նաեւ թէ ամէն գնով կ'ուզէ իր կազմին միացնել կարգ մը մարզիկներ, որոնք մաս կը կազմեն 21 տարեկանէն վար կրտսերներու ազգային խումբին:

Ստորեւ՝ Լըմէրի կողմէ նկատի առնուած մարզիկները՝ Սկովտիոյ դէմ տեղի ունենալիք մրցումին.

ԲԵՐԳՎՊՎՆԵՐ.- Ֆապիէն Պարթէյ (Մանչեսթըր Եունայթըտ) եւ Ուլրիշ Ռամէ (Պորտո):

ՅԵՏՍԱՊՎՆԵՐ.- Վենսան Քանտելա (Ա. Էս. Ռոմա), Ֆիլիպ Բրիսթանվալ (Պարսելոնա), Մարսէլ Տըսայի (Չելսի), Ֆրանք Լըպֆօֆ (Մարսէլ), Պիսենթէ Լիսարպու (Պայէրն Միւնխի) եւ Միքայէլ Սիլվեսթր (Մանչեսթըր Եունայթըտ):

ՄԻՋՆԱՊՎՆԵՐ.- Էրիք Քարիէր (Լիոն), Բլոստ Մաքելէյէ (Ռէյա Մատրիտ), Էմանուէլ Փըթի (Չելսի), Ռոպերտ Փիլի (Արսենալ), Փաթրիք Վիէրա (Արսենալ), Չիլենտին Չիտան (Ռէյա Մատրիտ) եւ Բրիսթիան Քարամպէօ (Օլիմպիկա):

ՅԱՍԱՊՎՆԵՐ.- Թիէրի Հանրի (Արսենալ), Սթի Մարլէ (Ֆուլիէմ), Տաիտ Թրեպէկէ (Եուրվենթու) եւ Սիլվէն Ռիլթորտ (Արսենալ):

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՃՈՐՏԸՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ, ՈՒԻՉԱՐՏԾ ՅԱՂԹԵՅ


Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, բոլորին ուշադրութիւնը կեդրոնացած էր Ուաշինկթըն Ուիչարտսի մարզիկ Մայքըլ Ճորտընի վրայ, որ ծունկի վիրաբուժութեան ենթարկուած ըլլալուն պատճառով բացակայած էր 12 մրցումէ: Անցեալ Փետրուար 27ին վիրաբուժութեան ենթարկուած Ճորտըն դաշտ ներկայացաւ սակայն միայն 16 վայրկեան, նշանակելով եօթը կէտ Տենվըր Նակէթցի դէմ տեղի ունեցած մրցումին, որուն ընթացքին անոր կազմը 107-75 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց: Տենվըր կը կրէր յաջորդական իր վեցերորդ պարտութիւնը: Ճորտընը փոխարինած Ռիչըրտ Հեմիլթըն նշանակեց 30 կէտ:

Նշենք, թէ առանց Ճորտընի իր կատարած 12 մրցումներուն ընթացքին Ուիչարտս յաղթած էր միայն չորս մրցում:

Սան Անթոնիոյ մէջ, Լոս Անճելըս Լէյքըրզ 108-90 արդիւնքով

պարտութիւն մը կրեց դաշտին տերերէն՝ Սփըրդէն: Սփըրզ, որ կ'արձանագրէր յաջորդական իր տասերորդ պարտութիւնը, այժմ բաւական մօտ է իր խմբակին (միջաբնութեան գօտի, Արեւմտեան շրջան) պարագլուխի դիրքը գրաւող Տալաս Մալքըրիքսի, որուն հետ պիտի ձակատի այսօր:

Սփըրզի մարզիկ Թիմ Տանքըն նշանակեց 25 կէտ, իսկ Լէյքըրզի մարզիկներէն Քո-



Մայքըլ Ճորտըն

պէ Պրայընթ՝ 20 կէտ, իսկ Շաքիլ Օնիլ՝ 17 կէտ եւ 10 ռիպաունտ:

Պոսթընի մէջ Սելթիքս արձանագրեց յաջորդական իր ութերորդ յաղթանակը, 96-70 արդիւնքով պարտութեան մատնելով Քիլվինտ Քաւալիր-ը: Սելթիքսի մարզիկ

Փոլ Փիրս նշանակեց 22 կէտ եւ 10 ռիպաունտ:

Ֆիլադելֆիայի մէջ, Սիքսըրզ 82-77 արդիւնքով պարտութիւն մը կրեց Մայքըլ Հիթին, հակառակ անոր, որ Էլըն Այվըր-ըն Սիքսըրզի հետ նշանակեց 38 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Պոսթըն Սելթիքս - Քիլվինտ Քաւալիրզ 96-70

Շարլոթ Տոնէթք - Բնաիանա Փէյլըրզ 94-88

Մայքըլ Հիթ - Ֆիլադելֆիա Սիքսըրզ 82-77

Նիւ ձըրզի Նէք - Փորթլէնզ Թրէյլ Պլէյզըրզ 97-82

Սան Անթոնիո Սփըրզ - Լոս Անճելըս Լէյքըրզ 108-90

Ուաշինկթըն Ուիչարտս - Տենվըր Նակէթց 107-75

Սպորթս աշտօրուան մրցումներուն յայտագիրը.

Նիւ Եորք Նիքս - Արլանթա Տորս Միլենտօրա Վուլվզ - Մեմֆիս Կրիզիկ Սան Անթոնիո Սփըրզ - Տալաս Մալքըրիքս

Տիքսոնիք Փիսթըրզ - Տէօնիքս Սանգ Ուաշինկթըն Ուիչարտս - Եուրա ձէզ Տենվըր Նակէթց - Մաքրանթէթօ Քիսկզ Լոս Անճելըս Քիլվիզըրզ - Կոլորադ Սթըյթ Ուորիորզ

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

ՃԱՓՈՆ - ՈՒՔՐԱՆԻԱ՝ 1-0

Ֆուտպոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, Ճափոն 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ուքրանիան, 45 հապար համակիրներուն ներկայութեան: «Նակայ»ի դաշտին մէջ (Օսաթա) տեղի ունեցած այս մրցումին «որք» կողմ նշանակեց միջնապահ Քաչուրուքի Թոտա (24րդ): Հակառակ Անտրէյ Շելչէնքոյի (Ա. Սէ. Միլան), եւ Սերկէյ Ռեպրովի (Թորքենհամ) բացակայութեան, հիւր կազմը Ա. կիսախաղին բաւական նեղ կացութեան մատնեց դաշտին տերերը, առանց սակայն կարենալ կոլ նշանակելու: Նշենք, թէ Ճափոնէն կը բացակայէին Հիտեթոշի Նաքաթա (Փարմա) եւ Շինժի Օնօ (Ֆէյլենուրտ Ռոթերտամ):

Ճափոնի ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ Ֆիլիպ Թրուսիէ, որ մրցումին օրը կը տօնէր իր ծննդեան 47րդ տարեդարձը, այսպիսով իր լաւագոյն նուէրը ստացաւ իր մարզիկներուն կողմէ:

Մրցումին ընթացքին ուղղաթիւներ շրջան կ'ընէին դաշտին վերեւ, ապահովութեան հսկելու

փորձեր կատարելով եւ պատրաստուելով այս ամառ տեղի ունենալիք 2002ի Մոնտիալին, որ տեղի պիտի ունենայ Ճափոնի եւ Հարավային Թորքայի մէջ:

Ճափոնի յաջորդ մրցակիցը պիտի ըլլայ Լեհաստան: Մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Չորեքշաբթի, 27 Մարտին Լոժի մէջ (Լեհաստան):

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԸԵՇՈՍ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
«ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆ»
Պիտի Երկայացնէ
ԳՈՂՇ. Տ. ԳԵՂԱՐԴ ԱՐԴ. ՔԻՒՄՊԵԿԵՆՆ
Տեղի կ'ուճեցայ Շաբաթ, 23 Մարտ 2002ի երեկոյեան ժամը 6:30ին, ՇԵՇՈՍԻ կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան, Անթիլիա:

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ ՄԷՋ, ԹՄԵՑՈՒՄԻՅԻՉ ԳՈՐԾԱԾԱԾ ԸԼԼԱԼՈՒՄ ԴԱՍԱՐ՝

ՊԱՔՍԹՈՐ ԻՐ ՇԱՅԱԾ ՊՐՈՆՁ ՄԵՏԱԼԸ ԵՏ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՐՁՆԵ

Աթլետիկ միջազգային Ողիմպիական Կոմիտէն երէկ յայտարարեց, որ բրիտանացի Էլըն Պաքսթըրէն խլուեցաւ Սոլթ Լէյք Սիթի մէջ Ողիմպիականի մրցումներուն ընթացքին անոր շահած պրոնչ մետալը, երբ քննութիւնները դրական արդիւնք տուին եւ իր յայտ եկաւ, որ ան թմրեցուցիչ գործածած է:



Էլըն Պաքսթոր

Պաքսթորի շնորհիւ, Բրիտանիա շահած էր իր երկրորդ պրոնչ մետալը, դահուկարշառի մրցումներուն: Բրիտանիայէն այդ մետալը խլուելէն ետք, այժմ նոր հրապարակուած դասաւորման հիմամբ, անիկա այսպիսով շահած կ'ըլլայ մէկ ոսկի եւ մէկ պրոնչ մետալներ միայն:

Այժմ այդ պրոնչ մետալը պիտի տրուի ամառիացի Պենամին Ռէշի, որ անոր ետին գրասած էր չորրորդ դիրքը:

28 տարեկան բրիտանացին, այժմ մինչեւ այս ամառու վերջը պայմանաւորման մը ունի իր շահած այդ պրոնչ մետալը վերադարձնելու Աթլետիկ միջազգային Ողիմպիական Կոմիտէին, որ իր կարգին պայն պիտի փոխանցէ Պենամինի:

Բրիտանացին սակայն ցարդ չէ որոշած, որ մինչեւ այս ամառու վերջը ի՞նչ միջոցի պիտի դիմէ պաշտպանելու համար իր դատը:

Պաքսթորի պրոնչ մետալը առնելով, Աւստրիա այսպիսով 2002ի ձմեռնային Ողիմպիականի մրցումներուն շահած կ'ըլլայ 2 ոսկի, 4 արծաթ եւ 11 պրոնչ մետալներ:

Մ. ԱՆՅԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ՔԱՆ ԵՒ ԼԵՂՄԱՆ ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻՆ

Գերմանիոյ ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ՝ Ռուտի Վէյլըր, որ երէկ յայտարարեց իր կազմը՝ յառաջիկայ Չորեքշաբթի, 27 Մարտին, Ռոսթըր մէջ, Միացեալ Նահանգներու դէմ տեղի ունենալիք ֆուտպոլի միջազգային բարեկամական մրցումին համար, իր կազմէն դուրս ձգեց բերդապահ եւ խմբապետ Օլիվըր Քանը: Վէյլըր յայտնեց ըսելով, որ Պայէրն Միւնիխի բերդապահը հանգիստի պէտք ունի պարպապէս:

Անոր փոխարէն, Վէյլըր ազգային խումբը հրաւիրեց Երկ Պաթը (Պայէր Լեւերքուզըն) եւ Ֆրանք Ռոսթըր (Վերտրըր Պրեմըն): Պաթ ցարդ միայն մէկ անգամ կրած է ազգային խումբին շապիկը, մինչ Ռոսթըր՝ ոչ մէկ անգամ:

Գերմանիոյ պահեստի բերդապահ Եսա Լեհման (Պորուսիա Տորթմունտ) դուրս մնաց 24 մարզիկներու ցանկէն, Պոնտրալիկայի մրցումներուն ընթացքին չորս մրցումով կահակայութեան համար: Վէյլըր շեշտեց սակայն, որ այդ մէկը միայն մէկ մրցումի համար է:

Միացեալ Նահանգներու դէմ տեղի ունենալիք մրցումէն պիտի բացակային նաեւ Պայէրն Միւնիխի մարզիկներ՝ Քարսթըն Եանքըր եւ Սեհմէթ Շոյ (երկուքն ալ վիրաւոր):

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ ԲՈՂՈՐ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Բոլոր հայ աշակերտները, որոնք 2000 - 2001 տարեշրջանի, պրէօփէի կամ Բ. պաքսթորի քննութիւններուն յաջողեցան պատուով կամ բարձր պատուով յիշատակութեամբ, կրնան ներկայաւայ ԳՆԱՃԵՆՆ հաստատութիւն, ստանալու համար իրենց նախապիտոյութեամբ արեւի կամ բժշկական ակնոց մը:

Յանելեայ տեղեկութիւններու համար դիմել հետեւեալ հասցէին, KNAJIAN OPTICALS. Ժողովրդի մայրուղի, «Եարա» սենթըր, Ալարկ: Հեռ. 01-877740:

